Digitally signed by HAYRAPETYAN HRACHUHI

# ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ

# ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

VII դասարան

## 2022-2023 ուստարի

Ուս.՝ Մացոյան Այա

# VII դասարան

| | *Դասի թեմա* | *Ուսուցանվող նյութ* | *Դասի նպատակ և խնդիրներ* | *Օգտագործվող նյութեր* | *Դասի ընդացք* |
|---|---|---|---|---|---|
| 1 | Դասական և հանրամատչելի երաժշտություն (9 ժամ) | Ուսուցանել Ռ.Պետրոսյանի «Իմ ուսուցիչ» երգը, ունկնդրել Կոմիտասի «Էս առուն ջուր է գալիս» | Աշակերտի մեջ զարգացնել և ընդլայնել դասական և հանրամատչելի երաժշտական մտահորիզոնները | Դաշնամուր, ձայներիզ | Կազմակերպչական հարցեր, կրկնել անցած երգերը և սովորել հանրամատչելի «Իմ ուսուցիչ» երգը |
| | - | Կրկնել երգը, վերլուծել, ունկնդրել Ա.Այվազյանի «Հայաստան երգը» | Ծանոթացնել տարբեր կոմպոզիտորների հանրամատչելի ստեղծագոր-ծություններին | CD | Սովորեցնել շրջապատում հնչող երաժշտության մեջ ճիշտ կողմնորոշվել, տարբերել բարձր արվեստը անճաշակ, անբովանդակ երաժշտությունից: Վերլուծել ունկնդրած ստեղծագոր-ծությունները |
| 2 | Հոգևոր երաժշտություն | Ուսուցանել Ն.Շնորհալու «Առավոտ լուսո», ունկնդրել Գր.Նարեկացու «Հավուն-հավուն» | Ծանոթացնել միջնադարի երաժշտությանը և առաջացնել սեր հոգևոր երաժշտության հանդեպ | CD դաշնամուր | Ունկնդրել միջնադարյան երաժշտություն, զրուցել ստեղծագոր- ծողների և նրանց ստեղծագոր-ծությունների առաջացման պատմությունից և վերլուծել հոգևոր, ստեղծագոր-ծություններ |
| 3 | Հոգևոր երաժշտության ունկնդրում | Կրկնել «Առավոտ լուսո» ստեղծագոր- ծությունը, ունկնդրել «Տէ՛ր, ողորմյա՛» | Որպես I քրիստոնեա ազգ աշակերտը պիտի իմանա իր հոգևոր պատմությունը և մշակույթը | Դաշնամուր CD | Զրույց հոգևոր երաժշտություն թեմայով, ծանոթացնել հոգևոր ստեղծագոր- ծությունների կազմությանը և տեսակներին: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 4 | Պատարագ | Ուսուցանել «Տե՛ր, ողորմյա», ունկնդրել «Քրիստոս ի մեջ մեր հայտնեցավ» | Ծանոթացնել պատարագի ստեղծման պատմությանը, աշակերտի մոտ զարգացնել դասական երաժշտություն լսելու, ստեղծագոր-ծությունը ինքնուրույն մեկնաբանելու և արժեքավորելու կարողությունը | CD<br>DVD | Հագևոր երգի միջոցով աշակերտին մոտեցնել միջնադարի երաժշտությանը, որը այդ ժամանակահատվա- ծում բարձր արվեստ է եղել և Եկմալյանի Բազմաձայն մշակած «Պատարագի» շնորհիվ Եվրոպան ճանաչեց հայ հոգևոր երաժշտությունը: |
| 5 | Մ.Եկմալյան, կյանքը և ստեղծագոր-ծությունը | Ունկնդրել և ուսուցանել «Քրիստոս ի մեջ մեր հայտնեցավ» երաժշտություն Մ.Եկմալյանի, ունկնդրել Կոմիտասի «Հա՛յ մեր»-ը | Զարգացնել նոտաներով (երկձայն) երգելու կարողությունը | CD<br>DVD<br>դաշնամուր<br>նոտայի տետր | Ուշադրությունը հրավիրել արտահայտիչ երգեցողությանը, որը կարևոր է հոգևոր երաժշտության մեջ: Ծանոթացնել Մ.Եկմալյանի ստեղծագործական բնութագրին |
| 6 | Գուսանական և աշուղական երգարվեստ | Ունկնդրել Ջիվանու երգերը | Ծանոթացնել աշակերտին գուսանական և աշուղական երգարվեստի հետ | CD<br>դաշնամուր | Գուսանական և աշուղական երգարվեստները լսելով և կատարելով սեր առաջացնել աշակերտի մեջ, ծանոթացնել հայ երաժշտական մշակույթի ճյուղերին |
| 7 | Դասական և հանրամատչելի երաժշտություն | Ունկնդրել Մոցարտի «Գիշերային փոքրիկ սերենադը» և հատվածներ «Ռեքվիեմից», վերհիշել և երգել Մոցարտի «Օրորոցային» երգը | Ունկնդրել Մոցարտի ստեղծագոր-ծությունը վերլուծել, զարգացնել ունկնդրած երաժշտությունը վերլուծելու և ինքնուրույն եզրահանգման գալու կարողությունը | CD<br>DVD | Հարցերի միջոցով ճշտել աշակերտի նախնական գիտելիքները հանրամատչելի երաժշտութայն մասին, ամփոփել դասը ասելով, որ կոմպոզիտորները, ովքեր գրում են դասական երաժշտություն, ունեն նաև զվարճական ստեղծագործություն-ներ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Հովհաննես Չեքիջյան | Ունկնդրել Հայաստանի ակադեմիական երգչախմբի կատարումներից, Կոմիտասի «Անձրև եկավ» խմբերգը | Ծանոթանալ Վ.Ա.Մոցարտի «Ռեքվիեմից» հատվածներին, Լ.Բեթհովենի 9-րդ սիմֆոնիայից հատվածներին և կրկնել անցած դասական երգերը | CD DVD | Ներկայացնել հայ անվանի խմբավար-դիրիժոր Հ.Չեքիջյանի կյանքը, լսել նրա ակադեմիական երգչախմբի կատարումները, պատմել, թե ինչ աշխատանք կատարել երգչախմբային արվեստում, ինչպես է զարգացրել այն |
| 8 | Դասական, ջազային և հանրամատչելի երաժշտության փոխներթափան-ցումը (8 ժամ) | Ունկնդրել Ա.Բաբաջանյանի երգերը և «Հայկական ռապսոդիան», ուսուցանել «Իմ Երևան» երգը երաժշտությունը՝ Ա.Բաբաջանյանի | Սովորեցնել, ունկնդրել և վերլուծել Ա.Բաբաջանյանի ստեղծագոր-ծությունները, զարգացնել ունկնդրած երաժշտությունը վերլուծելու և ինքնուրույն եզրահանգման գալու կարողությունը | CD DVD Դաշնամուր | Հայ ականավոր կոմպոզիտոր Ա.Բաբաջանյանի կյանքը և ստեղծգործական ուղին սովորել և ունկնդրել ստեղծագործություն-ները, ծանոթանալ վերջինիս դաշնամուրային արվեստի հետ, լսել և կատարել երգերը |
| 9 | Էդգար Հովհաննիսյան | Ուսուցանել «Էրեբունի-Երևան» երաժշտություն՝ Է.Հովհաննիսյանի ունկնդրել հատվածներ «Անտունի» բալետից և «Սասունցի Դավիթ» օպերա-բալետից, երաժշտություն՝ Է.Հովհաննիսյանի | Սովորեցնել կատարել երգը մաքուր և արտահայտիչ, զարգացնել երգի կերպարը զգալու կարողությունը, դաստիարակել սեր երաժշտության հանդեպ | CD DVD դաշնամուր | Ծանոթանալ Է. Հովհաննիսյանի կյանքի և ստեղծագործական աշխատանքների հետ, սովորել և կատարել նրա երգերը, ծանոթանալ օպերային և բալետի արվեստների հետ |
| 10 | Դասական և հանրամատչելի երաժշտության փոխներթափան-ցումը | Ուսուցանել և ունկնդրել Լ.Բեթհովենի «Զոն ուրախության» խմբերգը 9-րդ սիմֆոնիայից, ունկնդրել Ռ.Շտրաուսի «Արտիստի կյանքը» վալսը և «Տրիկ-տրակ» պոլկան | Ծանոթացնել և զարգացնել Դասական և հանրամատչելի երաժշտության փոխներթափան-ցումը, ունկնդրելով դասական կոմպոզիտորների գործեր | CD DVD | Քննարկել դասական և հանրամատչելի երաժշտության տարբերությունները և փոխներթափանցումը, վերլուծել ունկնդրած ստեղծագործություն-ները |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 11 | Դասական երաժշտության արդիականու-թյունը. Ի.Ս.Բախի կյանքը և ստեղծագործու-թյունը | Ունկնդրել Ի.Ս.Բախի ստեղծագործություն- ներից «Երգեհոն», «Պոլիֆոնիա» | Ծանոթացնել Ի.Ս.Բախի ստեղծագործու-թյուններին, «Երգեհոն» նվագարանի, «Պոլիֆոնիայի» հետ, զարգացնել պոլիֆոնիկ երաժշտությունը ընկալելու կարողությունը | CD DVD | Կազմակերպել քննարկում «Դասական երաժշտության արդիականությունը» թեմայով, դասարանը բաժանել երկու խմբի, տալ առաջադրանք՝ կարդալ գրքի տեքստը, ապա ներկայացնել ստացած տեղեկությունները, այնուհետև ունկնդրել ռե մինոր «Տոկատը և ֆուգան», ապա վերլուծել |
| 12 | Ջազային երաժշտություն. Ջ.Գերշվին, կյանքը և ստեղծագործու-թյունը | Ուսուցանել «Երբեմն ինձ որբ եմ զգում» սպիրիչուելը, ունկնդրել «Կլարայի օրորոցային երգը» «Պորգի և Բես» օպերայից և «Ռապսոդիա բլուզի ոճով» երաժշտություն՝Ջ.Գերշվինի | Զարգացնել ջազային երաժշտությունը ակտիվ ունկնդրելու և տարբերելու կարողությունը, դաստիարակել սեր դեպի ջազային երաժշտություն | CD DVD | Վերհիշել նախորդ դասի թեման, պատմել Ջ.Գերշվինի կյանքի և նրա ստեղծագործության մասին, հիշեցնել ռապսոդիայի ժանրի մասին, դասն ամփոփել՝ կատարելով աշխատանքային տետրերի առաջադրանքները համեմատել բոլոր ռապսոդիաները |
| | Ջազային երաժշտությունը Հայաստանում. Ա.Այվազյանի կյանքը և ստեղծագործու-թյունը | Ուսուցանել «Աղջկա երգը» երաժշտություն՝ Ա. Այվազյանի, ունկնդրել «Հայկական ռապսոդիա» երաժշտություն՝ Ա. Այվազյանի | Ծանոթանալ ջազային երաժշտությանը Հայաստանում, ունկնդրել և կատարել հայ ջազ կոմպոզիտորների ստեղծագործու-թյունները | CD DVD | Քննարկել «Ջազի դերը Հայաստանում» թեման, վերհիշել հայ և արտասահմանյան ջազ կոմպոզիտորներին և նրանց ստեղծագործու-թյունները, զարգացնել սեր ջազի նկատմամբ |
| | Կոստանտին Օրբելյան | *Ուսուցանել* «Արնիկ» երգը, ունկնդրել Մ.Վարդազարյանի ջազային ստեղծագործու-թյունները | Ծանոթացնել Կ.Օրբելյանի կյանքին և ստեղծագործու-թյանը, զարգացնել ջազ երաժշտություն ակտիվ ունկնդրելու և տարբերակելու կարողությունը, դաստիարակել սեր դեպի հայ ջազ կոմպոզիտորների ստեղծագործու-թյունները | CD DVD | Ամփոփել նախորդ դասի թեման, կազմակերպել քննարկում « Ջազ երաժշտության արդիականությունը » թեմայով, հարցերի միջոցով պարզել աշակերտների գիտելիքները Կ.Օրբելյանի և նրա ստեղծագործու-թյունների վերաբերյալ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 13 | Թեմայի ամփոփում. Ռոք երաժշտություն, հետազոտական աշխատանքներ | Ունկնդրել «Բիթլզ», «Ռոլինգ սթոունս», «Դիփ փափլ» և հայկական ռոք խմբերի երգերը | Ծանոթացնել «Բիթլզ», «Դիփ փափլ» և հայկական ռոք խմբերի երգերին, զարգացնել ռոք երաժշտություն ընկալելու կարողություն | CD<br>DVD | Հարցնել, թե որ խումբն են նախընտրում աշակերտները և ինչու, քննարկել ռոք երաժշտության զարգացվածությունը Հայաստանում |